

- 60 կաւ տեղացիք: Իսկ քաղքցիքն պերճ եւ փա-  
ռաւոր, փարթամք եւ փառաւորք որպէս զիշ-  
խանս, պարթեւք եւ աղնաւորք. զգեստ ու-  
նին մեծագին, քամխա, սօֆ, սկառլաթ, չու-  
խայ եւ սամուր գոակ խտտիֆայ: Ոմանք  
65 ունէին գիւղք. այլք ազարակ եւ աւանս. բայց  
այժմ չունին, զի անցեալ են տեարքն եւ զեղքն  
այլոց մնացեալ. բայց անուանք Հայոց դեռ  
կան ի վերայ գիւղիցն:

- Այլ եւ որիչ եւ զատ դատաստան ունին  
70 եւ սուր, որ զհայ գողս եւ զաւազակս կազեն<sup>1</sup>  
եւ գլխատեն. եւ ոչ ոք կարէ դատել զՀայք,  
միայն Հայոց դատաւորքն: Ապա որք տանու-  
տէրքն են՝ սեւ հազնին:

- Եւ չկայ մէջ նոցա արվեստաւորք, այլ  
75 ամէնքն վաճառականք են, մեծ եւ անուանիք.  
ունին եւ վէքիլնի Ստամպոլ, Անկուրի, Սպա-  
հան, Մօսքով, Կտանսքա, Պօրթուկալ եւ այլն:  
Կան ի մէջ նոցա խոճայք, որ ունին ԾՌ, ԿՌ,  
ԶՌ եւ ՃՌ զուռուչ կտոմ աւելի: Ունին մուլ-  
80 քեր, պաղ ու պաղչանի, պտղատու ծառեր,  
պարտէզք, բուրաստանք, ծաղկաստան եւ  
վարդենիք. այլ եւ բարձր սարայք, դարպասնի  
եւ աղբերք յորդարուխք. եւ լիճք ի մէջն՝ մեծ  
եւ լայն, լի ձկամբ. զոր ոմանք եւ աշտարակք  
85 եւ սարայնի ունին ի վերայ ջրոյն դարմա-  
նաչէն:

62 սգեստ: — 65 յազարակ եւ յաւանս: — 78 կա:  
— 81 ծաղկասղան: — 82 վարթենիք: — 83 յաղբերք:

<sup>1</sup> Ռուս. казати պատժել: